ԿԱԹՈՂԻԿԷ ԽԱՉԸ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅՈՑ ՀԵՐԱԼԴԻԿԱՅՈՒՄ

Միսաք Ճեւահիրճեան

«Կաթողիկէ խաչի» կերպարը վաղ միջին դարերից ընդունուած է Հայոց Առաքելական սուրբ Եկեղեցու խորհրդանիշերի թւում: Նրա կերպարը ձեւաւորուած է հաւասարաթեւ 1 մեծ ու 4 փոքր խաչերի կազմով: Հաւասարաթեւ Մեծ խաչը տեղադրուած է կենտրոնում, իսկ 4 փոքր խաչերն էլ տեղադրուած են Մեծ խաչի թեւերի միջեւ մնացած պարապութիւններում: Այս հաշուով «Կաթողիկէ խաչը» կազմուած է լինում 5 խաչերից: Կենտրոնի Մեծ խաչը խորհրդանշում է Յիսուս Քրիստոսին, իսկ շուրջի 4 փոքր խաչերը խորհրդանշում են չորս աւետարանիչներին: «Կաթողիկէ խաչի» կերպարը ներգրաւուել է նաեւ հայկական տաճարաշինութեան ասպարէզում: «Կաթողիկէ» ոճով կառուցուած եկեղեցիները ունեն մէկ մեծ կենտրոնական գմբեթ, իսկ չորս անկիւններում էլ ունեն մէկական փոքր գմբեթներ: Յատակագծում «Կաթողիկէ» ոճով կառուցուած եկեղեցիները աւելի բարձր կոչում եւ հետեւաբար՝ դիրք ունեն միւս եկեղեցիների նկատմամբ: «Կաթողիկէ» եկեղեցիները լինում են տուեալ թեմի հոգեւոր առաջնորդ եպիսկոպոսի վարչական կենտրոնատեղին: «Կաթողիկէ» եկեղեցիներ են եղել Աւանի Ս. Կաթողիկէն, Երեւանի Կաթողիկէ Ս. Աստուածածինը, Վաղարշապատի Ս. Հռիփսիմէի Կաթողիկէ եկեղեցին, Տարսոնի Ս. Սոփի Կաթողիկէ տաճարը (այժմ՝ մզկիթ), Սսի կաթողիկոսարանի տաճարը: Հայկական է եղել «Կաթողիկէ խաչի» ձեւաւորման գաղափարը: Կիլիկիայի Հայկական պետութեան, յատկապէս՝ թագաւորութեան շրջանի զինանշանագիտութեան (հերալդիկայի) ասպարէզում կարեւոր տեղ է ունեցել «Կաթողիկէ խաչի» կերպարը: Այդ էլեմենտը օգտագործուել է Կիլիկիայի բազմաթիւ հայկական բերդերի, իշխանութիւնների, ազնուական տների, թագաւորի եւ քաղաքների զինանշաններում: «Կաթողիկէ խաչով» են ձեւաւորուած Կիլիկիայի Հայոց Սելեւկիա, կաթողիկոսանիստ Հռոմկլա, Կոռիկոս, Լամաս, Բարձրբերդ եւ այլ բերդերի, Սսի թագաւորական պալատի, թագաւորի անձնական եւ այլ զինանշանները: «Կաթողիկէ խաչով» զինանշանները յատուկ են քրիստոնեայ պետութիւններին: Սակայն եւրոպական պետութիւններն էլ առհասարակ չունեն «Կաթողիկէ խաչի» կերպարով զինանշաններ: Նոյնիսկ եւրոպական հերալդիկայի էլեմենտների թւում չի ներգրաւուած «Կաթողիկէ խաչի» կերպարը: Ռուսական եւ Խորհրդային պետութիւններում էլ չեն եղել յիշեալ կերպարով նշաններ: Միայն Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերրանդ (Clermont-Ferrand) քաղաքի զինանշանն է «Կաթողիկէ խաչի» տարբով:

Հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլա ամրոցի (1151-1292 թթ.) զինանշանը բաղկացած էր երկու մասերից: Նրա դաշտի վերեւի կէսը զբաղեցուած էր կաթողիկոսական երկգլխանի արծուի (սուրբ Գրիգոր Լուսաւորչի) նշանով: Իսկ դաշտի ներքեւի կէսում տեղադրուած էր Հռոմկլա բերդի «Կաթողիկէ խաչի» իւրայատուկ տեսքով ձեւաւորուած զինանշանը: Ներքեւի կէս դաշտի կենտրոնում քանդակուած էր հաստ թեւերով հաւասարաթեւ խաչը, իսկ նրանից աջ եւ ձախ քանդակուած էր երկու զոյգ թուր-խաչերից ձեւաւորուած Կաթողիկէն: Դաշտի աջ եւ ձախ կողմի եզրերի մօտ քանդակուած էր նաեւ մէկական ձուաձեւ ռումբի կերպարներ: Զինանշանի ընդհանուրը ներկայացնում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հոգեւոր առաջնորդի եւ Հռոմկլա բերդի մարտական ֆունկցիաները (նկ. 1):

Պահպանուել են Կիլիկիայի նաւահանգիստ-բերդաքաղաք Կոռիկոսի երկու զինանշանները: Դրանցից առաջինը պատկանում է Կոռիկոսի տէր իշխանաց իշխան Կոստանդին Պայլին: Այս զինանշանը գործածուել է 1222-1225 թթ. միջեւ: Դա քանդակուած էր Ցամաքային բերդի արեւելեան ճակատի ներքին պարսպի դռան բարաւորի վրայ: Ճակատակալ բարաւորի քարը տաշուած է գորշ բազալտից: Զինանշանը քանդակուած է նրա պարսպի դէպի արեւելք (դուրս) նայող մակերեսում: Զինանշան քանդակուած քարի ներքեւի մասը կոտրուած է հարուածի ազդեցութեամբ: Գորշ բազալտ քարի մակերեսին քանդակուած զինանշանը դարերի ընթացքում մաշուել է ծովի աղի ջրերի գոլորշիների ներգործութեան պատճառով: Անհետացել է զինանշանի ներքեւի հատուածը: Իմ այցելութեան ժամանակ ստացել էր անճանաչելի տեսք:

Նախքան զինանշանի նկարագրութիւնը հետաքրքիր կը լինի մի ակնարկ նետել զինանշանի հետ առնչուող պատմութեանը: Լեւոն Ա Մեծագործի մահից (1219 թ.) յետոյ Կիլիկիայի Հայկական թագաւորութիւնում ծայր առած անկարգութիւնների, կենտրոնախոյս իշխանների ապստամբութիւնների, զինուած ընդհարումների եւ նման գործողութիւնների թւում նշանակութեան արժանի էր նաեւ Կոռիկոսի տէր Վահրամ մարաջախտի ու նրա համախոհների ապստամբութեան դէպքը: Պետութեան խնամակալ, Պապերոնի եւ Բարձրբերդի տէր, Լեւոն Ա թագաւորի մօրեղբօր որդի Կոստանդին Պայլ իշխանաց իշխանը ջախջախիչ հարուած տուեց ապստամբ իշխաններին, գրաւեց նրանց տիրոյթները: Զինու զօրութեամբ գրաւուած Կոռիկոսը միացրեց իր տիրոյթներին (1222 թ.): Ահա այդ դէպքերից յետոյ ձեւաւորուեց Կոռիկոսի նոր զինանշանը: Դա բաժանուած է երկու մասերի: Վերեւի կէս հատուածում տեղադրուած է «Կաթողիկէ խաչի» մի այլ տարբերակ, որը նմանեցուած է նաեւ խաչի՝ իբր խորհրդանիշ նաւահանգիստ քաղաքի: Զինանշանի վահանակի ներքեւի կէս հատուածում տեղադրուած է իբր ծովային թռչուն ծովորորի եւ երկու ելիցուկ ծաղիկներին փոխարինող մոտիւներ: Զինանշանի վահանակը շրջապատուած է եղել հերալդիկական «մուշտակով», որը, ըստ սովորութեան, ընդունուած է եղել ներկել կարմիր գոյնով: Ճակատակալ բարաւոր քարի վրայ վահանակը շրջապատուած է ծակոտկէն եւ նաեւ հիւսուածքով կազմուած եզրացանցկէն շրջանակով: Զինանշանի «մուշտակը» պատկերուած է այդպիսի զարդարուն ձեւաւորումով: Զինանշանի շուրջը «մուշտակ» դնելու մենաշնորհը թագաւորների կողմից տրւում էր իշխանաց իշխանների թագաւորին, մօտ ազգականներին եւ Մեծ իշխաններին: Կոստանդին Պայլ Մեծ իշխանը իրաւասու էր իր զինանշանին «մուշտակ» դնելու:

Զինանշանի բաղկացուցիչ էլեմենտների թւում «Կաթողիկէ խաչի» մասնակցութիւնը առնչւում էր Կոռիկոսի եպիսկոպոսանիստ քաղաք լինելու հանգամանքի հետ: Հաւասարաթեւ են խաչի աջ, ձախ եւ վերեւի թեւերը: Ներքեւի թեւը

© National Library of Armenia

համեմատաբար երկայն է միւսներից: Խաչի իրանը կազմուած էր ընդհանուր թուով 20 տափօղակներից: Խաչի թեւերի կենտրոնում գտնւում է 1 տափօղակ: Խաչի ուղղահայեաց ձողի վրայ քանդակուած են 12 տափօղակներ, իսկ նրա հորիզոնական ձողի վրայ քանդակուած են 9 հատ տափօղակներ: Խաչի ներքեւի թեւի ծայրամասից դէպի աջ եւ ձախ բաժանուած են երկու բուսական ճիւղեր եւ բարձրանում են դէպի վերեւ, ինչպիսին լինում է հայկական խաչքարերի ներքեւի մասում: Ըստ հայկական եկեղեցական սիմվոլիկայի՝ խաչերի ներքեւի ծայրամասից բարձրացող բուսական ճիւղերը ձեւաւորւում էին արմաւենու ոստերից: Իսկ Կոռիկոսի Ցամաքային բերդի դռան զինանշանի «Կաթողիկէ խաչի» ներքեւի ծայրից բաժանուած բուսական երկու ճիւղերը ձեւաւորուած են քրքում (զաֆրան, Corycos) բոյսի ծաղիկներով եւ սպիներով: Քրքումը ներկատու եւ հոտաւէտ բոյս է, յունարէն կոչւում է «կոռիկոս»: Խաչի հաւասարաթեւ, այսինքն՝ աջ ու ձախ եւ վերեւի թեւերի ծայրերը ձեւաւորուած են ծովաորոր թռչունի թեւատարած դիրքի գծանկարով: Դա եւս նշան է զինանշանի առնչութիւնը ծովի, ծովափնեայ եւ նաւահանգիստ-քաղաք լինելու հանգամանքի հետ: Կոռիկոս նաւահանգիստ-քաղաքը հիմնել են մ.թ.ա. VIII-VII դդ. Յունաստանից եկած յոյն գաղթականները եւ այն անուանել են Դելֆից հիւսիս գտնուող իրենց հայրենի Կոռիկոս բնակավայրի անունով:

Խաչի ներքեւի թեւից դէպի աջ բաժանուած ցողունը պատկերուած է քրքումի բազմաթիւ տերեւների ու սպիների համադրումով: Իսկ դէպի ձախ բաժանուած ցողունը պատկերուած է քրքումի բացուած ծաղկի կերպարով:

Ներքեւից ճիւղաւորուած «Հայկական խաչի» կերպարը խորհրդանշել է «Յարութիւն» հասկացողութիւնը: Դա նախ եւ առաջ՝ իմաստաւորուել է «Հայաստանում պետականութիւնը կորցրած Հայկական թագաւորութեան վերածնունդը, յարութիւնը Կիլիկիայում» ձեւով: Երկրորդը՝ Վահրամ մարաջախտի եւ միւս համախոհ իշխանների ապստամբութեամբ Կիլիկիայի Հայկական թագաւորութիւնից անջատուած տիրոյթների վերստին միաւորումը թագի շուրջ: Դա համարուել է այդ տիրոյթների յարութիւնը:

«Կաթողիկէ խաչի» բաղկացուցիչ 4 փոքր խաչերին փոխարինել էին շրջանակների մէջ առնուած 4 երիցուկ ծաղիկների նմանակներ: Դրանք պատկերուած էին շրջանակների մէջ առնուած չկրկնուող մոտիւների ձեւով: Յաւերժութիւն խորհրդանշող երիցուկ ծաղկի երկու մոտիւներ էլ քանդակուած էին մօտակայ Սելեւկիայի բերդի դռան զինանշանում: Ըստ երեւոյթին, իշխան Կոստանդին Պայլի Կոռիկոս, Սելեւկիա եւ Բարձրբերդ տիրոյթների զինանշանների կերպարների միջեւ եղել են ընդհանրութիւններ:

Զինանշան քանդակուած բարաւորի քարի մակերեսը մաշուած եւ ներկից հետք մնացած չլինելու պատճառով այժմ պարզուած չեն զինանշանը կազմող էլեմենտների գոյները: Մենք պայմանականօրէն այն նկարել ենք սեւ-սպիտակ գոյներով: Կոստանդին Պայլի հաստատած Կոռիկոս քաղաքի զինանշանը գործածուել է 1222-1250 թթ. միջեւ: Դա իր մէջ խտացրել է եպիսկոպոսանիստ, նաւահանգիստ, Կոռիկոս եւ Մեծ իշխանի տիրոյթ քաղաքի նշանները (նկ. 2):

Միքայէլ Յովհաննիսեանի «Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները» աշխատութիւնում[1] յիշեալ զինանշանի համար F. Marra-ից վերցուած լու-

սանկարի տակ սխալմամբ գրուած է՝ «Կոռիկոս, խաչքար (Ֆ. Մարրա)»: Իրականում դա ոչ թէ խաչքար է, այլ Ցամաքային Կոռիկոս բերդի բարաւորին քանդակուած զինանշանն է:

Կոռիկոս նաւահանգիստ-բերդաքաղաքի երկրորդ զինանշանը գործածուել է XIV դ.: Ներկայացուած զինանշանը ընդօրինակել եմ Մադրիդի Ազգային գրադարանում գտնուող եւ 1350-1360 թթ. պատրաստուած գունաւոր մի քարտէզից, ուր նկարուած են Միջերկրականի ծովափնեայ քաղաքների զինանշանները կամ դրօշները: Կոռիկոսի այս զինանշանը ամբողջովին կազմուած է «Կաթողիկէ խաչի» կերպարով: Սեւ պաստառի կենտրոնում տեղադրուած է սպիտակ Մեծ խաչը: Զորս անկիւններում գոյացած սեւ քառակուսիների մէջ տեղադրուած են սպիտակ 4 փոքր խաչերը (նկ. 3):

Կիլիկիայի Հայկական պետութեան Սելեւկիա քաղաքի բերդի զինանշանը քանդակուած էր բարաւորի Հեթում Ա Թագաւորի 1236 թ. արձանագրութիւնից վերեւ: Զինանշանը կազմուած էր Գողգոթայի վրայ կանգնեցուած հորիզոնական երկթեւ կաթոլիկական խաչից, եւ 4 փոքր խաչերի փոխարէն քանդակուած էր Ս, Մ, Ա, Ս տարրերից ձեւաւորուած քառակուսիներ: Խաչի թեւերից ներքեւ էլ քանդակուած էր յաւերժութեան նշան՝ երիցուկի երկու ծաղիկներ: Տարրերի վրայի պատուի նշաններով ներկայացուել էր բերդի «Սուրբ Մարիամ Աստուածածին Սելեւկիոյ» անունը (ամբլեմ) եւ «Կաթողիկէ խաչի» փոքր խաչերին փոխարինող չորս քառակուսիները: Զինանշանը կազմողը (յօրինողը), կարողացել էր կրկնութիւններից խուսափելու համար «Կաթողիկէ խաչին» տալ գեղարուեստական եւ գեղեցիկ ուրոյն ոճ: Զինանշանը քանդակուել էր 1236 թ. Կիլիկիայի սպիտակ կրաքարի վրայ: Այդ թուականին բերդը պատկանում էր Հեթում Ա թագաւորի անձին: Զինանշանի գոյներն են Հեթումեան տան հարստութեան սեւ-սպիտակ գոյները եւ թագաւորական ոսկեգոյնը (նկ. 4):

Վահանակի պաստառը սեւ եւ խաչերը սպիտակ զինանշաններից մէկն էլ պատկանում էր Կոռիկոսի մօտակայ Լամաս կամ Լամոս բերդին: Դա եւս եղել է Պապեռոնի տէր Հեթումեան իշխանական տան հարստութեան տիրոյթներից մէկը: Լամաս բերդի զինանշանի վահանակի պաստառը ամբողջովին սեւ էր: Նրա «Կաթողիկէ խաչը» ձեւաւորուած էր հորիզոնական դիրքով երեք շարք շարուած, վերեւը՝ 3, մէջտեղը՝ 4 եւ ներքեւը՝ 3 հատ փոքր եւ սպիտակ 10 խաչերից: Վահանակի մէջտեղում 4 փոքր եւ սպիտակ խաչերը հորիզոնական ուղղութեամբ աջից ձախ շարուած էին կողք կողքի եւ ձեւացնում էին Մեծ խաչի հորիզոնական թեւերը: Վերջինիս վերեւի եւ ներքեւի թեւերը ձեւաւորուած էին մէկական փոքր սպիտակ խաչերից: Մնացեալ 4 փոքր խաչերը տեղադրուած էին վահանակի չորս անկիւնների մօտ: Այսպէս էր կազմուած Լամաս բերդի «Կաթողիկէ խաչի» նմանակ զինանշանը (նկ. 5):

Կիլիկիայի Հայկական պետութեան Բարձրբերդ ամրոցը մշտապէս պատկանում էր տիրակալի անձին: Ամրոցի բերդակալ իշխանը լինում էր տիրակալի մօտ ազգականներից վստահելի մի իշխանազգականներից վստահելի մի իշխան: Բարձրբերդում էր պահւում պետութեան գանձը: Տէրութեան նկատմամբ անհնազանդ, կենտրոնախոյս եւ ապստամբ դիրք ընդունած իշխաններին ու աւագանուն բանտարկում էին Բարձրբերդում: Այդ առումով Բարձրբերդ ամրոցի նշանակութիւնը մի քիչ տարբերւում էր միւս բերդերի նկատմամբ:

Բարձրբերդի զինանշանի դաշտը

© National Library of Armenia

կարմիր գոյնի էր: Ուղիղ թեւերով ոսկեգոյն Մեծ խաչը կարմիր դաշտը բաժանած էր չորս հաւասար մասերի: Մեծ խաչի թեւերի միջեւ մնացած քառակուսիների մէջ տեղադրուած էր «Կաթողիկէ խաչի» մէկական փոքր խաչերից մէկը: Փոքր խաչերից ամէն մէկը պատկերուած էր ոսկեգոյն սկաւառակի վրայ: Սկաւառակների եւ Մեծ խաչի եզրագծերը սեւ են: Փոքր խաչերն էլ սկաւառակների վրայ գծուած են սեւով: Փոքր խաչերի թեւերը միացած են սկաւառակների սեւ շրջագծերին (նկ. 6):

«Կաթողիկէ խաչով» գեղեցիկ մի դրօշի նմոյշ է մանրանկարիչ Սարգիս Պիծակ քահանայի 1336 թ. Սսում գրած եւ ծաղկած «Արքունական աւետարանի» մանրանկարներում պահպանուած դղեակի կայմին ծածանուող դրօշը: Կարմիր գոյնի է դղեակի դրօշի պաստառը: Զողափայտի մօտ, քառակուսի տարածութեան մէջ, տեղադրուած է «Կաթողիկէ խաչը»: Ոսկեգոյն են կենտրոնի Մեծ խաչը եւ դրա թեւերի միջեւ մնացած տարածութիւնում գտնուող 4 փոքր խաչերը: Վերջիններս տեղադրուած են սեւ քառակուսիների մէջ[2]:

Համարելով, որ միջնադարեան դրօշների եւ զինանշանների կերպարները եղել են նոյնը կամ քիչ տարբերութեամբ՝ ապա Սիսի դղեակի դրօշի կերպարը ընդունեցինք իբր զինանշան (նկ. 7):

Կիլիկիայի Հայկական պետութեան «Կաթողիկէ խաչով» զինանշանների թւում կարելի է նշել նաեւ Կոստանդին Դ Նղրեցի (1344-1363 թթ.) թագաւորի զինանշանը, որը նկարուել է 1350-1360 թթ.: Զինանշանի վահանակը հորիզոնական երկու մասի է բաժանուած: Վերեւի կէսի դաշտը ունի սպիտակ գոյն: Կարմիր գոյնի Մեծ խաչը տեղադրուած է սպիտակ դաշտի կենտրոնում: Թեւերի միջեւ մնացած տարածութիւններում տեղադրուած են կարմիր գոյնի փոքր խաչերը: «Կաթողիկէ խաչի» մեծ եւ փոքր 5 խաչերի թեւերի վերջաւորութիւնները լայնացուած են: Մեծ խաչը յարմարեցուած է դաշտի դիրքին, եւ նա ստացած է համապատասխան լայնակի տարածուած խաչի ձեւաւորում (նկ. 8):

Զինանշանի ներքեւի կէսի դաշտը ունի արծաթի գոյն՝ 5 ոսկեգոյն «ծաղիկներով»: Հորիզոնական դիրքով շարուած 3 «ծաղիկները» գտնւում են վերեւի շարքում, իսկ մնացեալ 2 «ծաղիկները» շարուած են ներքեւի շարքում: Կիլիկիայի Հայկական պետութիւնում «Ֆլոտռիս» կամ «ծաղիկները» շնորհւում էին թագաւորներին: Դրանք մենաշնորհն էին միայն գահակալների: 1199 թ. յունուարի 6-ին, Լեւոն Մեծագործի թագադրութեան հանդիսաւոր արարողութեան ժամանակ, թագի եւ միւս հանդերձանքի հետ միասին գայիսոն «ծաղիկը» տրուած էր միայն թագաւորին: Կիլիկիայի Հայկական պետութիւնում «Ֆլոտռիս» կամ «ծաղիկները» իբր նշան կարող էին գործածուել միայն Հայոց թագաւորների եւ նրանց «հայրենի» տիրոյթների զինանշաններում եւ դրօշներում:

Գեղեցիկ մի կոմպոզիցիա է ներկայացնում Կիլիկիայի Հայկական պետութեան վերջին թագաւոր Լուսինեան Լեւոն Ե-ի (1374-1375 թթ.) տոհմանշանը: Դա քանդակուած է Փարիզից հիւսիս, Սելեստինեան վանականների Սեն-Դընի աբբայարանում (Basilica of St. Denis) թաղուած Լեւոն Ե-ի տապանաքարի վրայ: Պահպանուած է տոհմանշանի գունաւոր ներկը: Լեւոն Ե-ը մահացած է 1393 թ. նոյեմբերի 29-ին եւ թաղուած է Ֆրանսիայի թագաւորների յիշեալ աբբայարանի գերեզմանոցում: Սակայն 1793 թ. Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ

ճախակողմեանները քանդել են Սեն-Դընի աբբայարանի ֆրանսիական թագաւորների գերեզմանները, այրել են աճիւնները եւ օդն են նետել մոխիրները: Այդ բախտին էր արժանացել նաեւ Հայոց Լեւոն Ե թագաւորի գերեզմանը: Հետագայում վերականգնուել է Լեւոն Ե-ի տապանաքարը, սակայն դատարկ է տակը: Մինչեւ օրս պահպանւում է տապանաքարը եւ տոհմանշանը:

Թւում է թէ այդ տոհմանշանը յօրինուել է Լուսինեան Ե-ի գերութիւնից ազատուելուց (1382 թ.) յետոյ՝ 1382-1393 թթ. միջեւ: Տոհմանշանը ինքնին ներկայացնում է Մերձաւոր Արեւելքում տիրապետած Լուսինեանների թագաւորական զինանշանների մի հաւաքածոյ: Այնտեղ տեսնւում է Կիլիկիայի Հայկական, Երուսաղէմի եւ Կիպրոսի թագաւորութիւնների զինանշանները, որոնք անհամատեղելի էին Կիլիկիայի Հայկական պետութեան զինանշանի վրայ: Դա չի կարող գործածուած լինել 1374-1375 թթ. Սսում պաշարուած եւ եօթ ամիս թագաւորած Լեւոն Ե-ի տիրապետութեան ժամանակամիջոցում: Կիլիկիայի զինանշանի վրայ ի՞նչ գործ պիտի ունենար Կիպրոսի թագաւորութեան եւ գոյութիւնից զրկուած Երուսաղէմի թագաւորութեան զինանշանները: Այսպիսով, Լեւոն Ե-ի տապանաքարի վրայ ի մի է հաւաքուել Լուսինեանների հարստութեան Երուսաղէմի, Կիպրոսի եւ Կիլիկիայի տիրոյթների նշանները, եւ դա ներկայացնում է իր մեծամոլութեան եւ փառասիրութեան անփառունակ առկայութիւնը: Այդ պատճառով մենք գտնում ենք, որ դա ոչ թէ զինանշան էր, այլ Լուսինեան հարստութեան տոհմանշաններից կազմուած մի տարբերակ[3]:

Սեն-Դընի աբբայարանի Լեւոն Ե-ի տապանաքարի տոհմանշանը պատրաստուած է եւրոպական հերալդիկայի հիմունքներով եւ բաժանուած է երեք հաւասար ուղղահայեաց մասերի: Ձախ կողմի 1/3 մասում տեղադրուած է Կիլիկիայի Հայկական պետութեան զինանշանը՝ ոսկեգոյն դաշտի վրայ «Կիլիկիայի Հայկական կարմիր առիւծով»: Վերջինս մարմնով ուղղուած է դէպի ձախ: Ուսին ունի Կիլիկիայի Լուսինեանների տան հարստութեան տարբերանիշ ոսկեգոյն փոքր եւ հաւասարաթեւ խաչը: Տոհմանշանի մէջտեղի ուղղահայեաց 1/3 մասում տեղադրուած է Երուսաղէմի Լուսինեան թագաւորների զինանշանը՝ արծաթագոյն դաշտի վրայ ոսկեգոյն խոշոր «Կաթողիկէ խաչով»: Հաւասարաթեւ են վերջինիս 4 փոքր եւ ոսկեգոյն խաչերը:

Տոհմանշանի աջ կողմի 1/3 մասում տեղադրուած է Կիպրոսի թագաւորութեան զինանշանը՝ արծաթագոյն եւ կապոյտ գոյնի վեցական հորիզոնական եւ բրիզներից (Burelles) կազմուած դաշտի վրայ նախորդի նման «Կարմիր առիւծ»: Վերջինս, Կիլիկիայի Լուսինեան հարստութեան «Կարմիր առիւծից» իբր տարբերիչ նշան, գլխից վերեւ ունի ոսկեգոյն թագ: Սա եւս մարմնով ուղղուած է դէպի ձախ (նկ. 9):

Տարրերի կազմից դատելով՝ գտնում ենք, որ Լեւոն Ե-ի այդ «Լուսինեան նշանը» չի կարելի լիիրաւ կերպով համարել Կիլիկիայի պետութիւնում գործածուած զինանշանների թւում: Վերջինս պատճէնահանուել է Կ. Բասմաջեանի աշխատութիւնից[4]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Մ. Ցովհաննիսեան, *Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները*, Վենետիկ-Ս. Ղազար, 1988, էջ 348:
2 Մ Մ ձեռ. թիւ 5786, թերթ 107բ, 138բ, 267բ:
3 Այսուհետեւ դրան կ'անուանենք «տոհմանշան»:
4 Կ. Բասմաջեան, Լեւոն Ե. Լուսինեան. *Վերջին թագաւոր Հայոց, Պարիս, 1908:*

© National Library of Armenia



Նկ. 1. կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդի զինանշանը՝ 1151-1292 թթ.:

Նկ. 2. Կոստանդին Պայլ իշխանաց իշխանի, Կոռիկոս բերդաքաղաքի զինանշանը՝ 1222-1250 թթ.:



Նկ. 3. Կոռիկոսի զինանշանը՝ 1350-1360 թթ.:



Նկ. 4. Սելեւկիա բերդի զինանշանը՝ 1236 թ.:



Նկ. 5. Լամաս բերդի զինանշանը՝ XIII դ. վերջին:

© National Library of Armenia



Նկ. 6. Բարձրաբերդի զինանշանը՝ 1333-1337 թթ.:



Նկ. 7. Սիսի պալատի զինանշանը՝ 1336 թ.:



Նկ. 8. Կոստանդին IV Նղրեցի թագաւորի (1344-1363 թթ.) զինանշանը՝ 1350 թ.:



Նկ. 9. Փարիզի Սեն-Դընի աբբայարանում վերջին՝ Լեւոն Ե Լուսինեան թագաւորի տապանաքարի քանդակից:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻ ՀԱՅ ԵՒ ՎՐԱՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Պաւել Չոբանեան

Հայ-վրացական միացեալ թագաւորութեան գոյութեան հնարաւորութեան գաղափարը կարող էր սկիզբ առնել IX դ., ձեւաւորուել X-XI դդ. հայ Բագրատունիների գերակայութեան, իսկ այնուհետեւ XII-XIII դդ.՝ վրաց Բագրատունիների քաղաքականութեան արդիւնքում: Հետագայ դարերում, ընդհուպ մինչեւ XVIII դ. վերջ, հնարաւոր է այն շարունակել է իր գոյութիւնը բազմապիսի դրսեւորումներով ու ընկալումներով: Եւ, սակայն, միասնական կարծիք ու յստակութիւն չկայ նման պետութեան ընկալման եւ սահմանումի մէջ: Նիկողայոս Ադոնցի բնորոշմամբ. «Բագրատունեաց գործունէութեան դաշտն էր Հայաստանն արաբական լայնարձակ մտքով (իմա՛ Արմինան – Պ. Զ.), այսինքն՝ ամբողջ Կովկասը, որի աշխարհագրական եւ քաղաքական կենտրոնն էր իրապէս Շիրակը՝ իշխանական նոր ոստանը: Այստեղից բխած կամ ներշնչուած ջանքերը տանում էին դէպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հաւաքել-խմբել կովկասեան բոլոր ցեղերը մի եւ հանուր քաղաքական յարկի տակ, ներդաշնակել նրանց կեանքն ու գործունէութիւնը համագործակցութեան եւ համերաշխութեան գետնի վրայ՝ Բագրատունի ծառի հովանու ներքեւ... Բագրատունիք յաջողեցին իրենց ծրագիրը մինչեւ մի որոշ աստիճան: Բաւական է վերյիշել Վրաց տարեգրքի զրոյցը, որ Թորգոմի որդիները, գլուխ ունենալով Հայոսին, կազմում էին մի ընտանիք, որ նրանք բոլորը խօսում էին մի լեզու, եւ այդ լեզուն հայերէնն էր[1]: Եթէ չենք ուզում արհամարհել այս զրոյցները, որպէս անարժէք եւ մտացածին առասպելներ, ապա պէտք է ընդունենք, որ նրանք պատմական յայտնի շրջանի ոչ միայն գաղափարական որոնումների, այլեւ իրական հասումների արձագանգ են: Այդ շրջանը Բագրատունեաց դարն է: Բագրատունի կորովի գործիչներն էին, որ հարթեցին, պատրաստեցին այն հողը, որի վրայ իրաւ կարող էին բողբոջել կովկասեան եղբայրակցութեան սերմերը եւ նրանց ձայնատու եւ գաղափարախօս զրոյցները... Բագրատունեաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպէս մի ընտանիք, մի քաղաքական կենակցութեան շաղկապի մէջ, ներկայանում է մեզ՝ որպէս մի խիզախում՝ գաղափարական լայնութեամբ անօրինակ միջնադարեան նեղսիրտ մթնոլորտում, եւ կազմում է այս նշանաւոր տոհմի պատմական փառքը»[2]:

Գագիկ I-ի Հայոց եւ Վրաց թագաւոր լինելու փաստը լոկ ինքնայորջորջում էր եւ արձանագրուել է իր գահակալութեան ընթացքում ժամանակի առաւել յայտնի ճարտարապետական կառոյցների վրայ փորագրուած արձանագրութիւններում՝ որպէս համընդհանուր ճանաչում ունեցող կարգավիճակ. «Ի :ՆԾ: թ[ուին] Հայոց, :ՄԺԹ: թ[ուին] Հոռոմոց ի ժամանակս ա[ստուա]ծապատիւ եւ հոգեւոր Տ[եառ]ն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի, ես՝ Կատրանիդէ հայոց թագուհի, դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի... հրամանաւ առն իմոյ Գագկա շահանշահի, շինեցի զՍուրբ Կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ Մեծին Սմպատա...»[3]: Ուշագրաւ հանգամանք է, որ, ըստ Դաւթի որդու Սմբատի

© National Library of Armenia